Տեղեկանք

ՀՀ 2017 թվականի զբոսաշրջության զարգացման

պետական ծրագրի կատարման վերաբերյալ

Ճշտված պլանը կազմել է 100.0 մլն դրամ, ֆինանսավորումը՝ 84.4 մլն դրամ, դրամարկղային ծախսը՝ 84.4 հազար դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 75.4 մլն դրամ: 2017 թվականի ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև շեղումը կազմել է 15.6 մլն դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելու արդյունքում առաջացել են տնտեսումներ:

Զբոսաշրջության ոլորտի իրավական դաշտի բարելավման նպատակով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել

- «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի փաթեթը:
- «Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.
- «Զբոսաշրջության մեծ ներուժ ունեցող նոր ուղղությունների զարգացման ծրագրին, ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին և նոր ուղղությունների զարգացման երեք ենթածրագրերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը,
- Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքներն զբոսաշրջության վայր դարձնելու ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

Հայաստանի զբոսաշրջության գրավչությունները ներկայացվել են թվով 5 միջազգային ցուցահանդեսներին, ինչպես նաև Profi.travel առցանց ցուցահանդեսին:

Պետական աջակցություն է ցուցաբերվել 8 փառատոնների անցկացմանը:

Գյումրիում և Մեղրիի ԱՏԳ-ում բացվել են զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ՝

ՀՀ պետական աջակցությամբ Հայաստանի մարզերում արդեն գործում են 5 տեղեկատվական կենտրոններ:

Իրականացվել են միջոցառումներ ներքին զբոսաշրջության խթանման նպատակով, մասնավորապես «Ճանաչի՛ր երկիրդ», «Բացահայտիր քեզ համար քո երկիրը», «Fun Armenia»: խորագրով արշավները, տպագրվել են 13000 հատ գովազդատեղեկատվական տարբեր նյութեր:

Ճանաչողական այցով Հայաստան են այցելել 11 երկրներից թվով 102 միջազգային հայտնի ԶԼՄ ներկայացուցիչներ, արդյունքում մինչ այսօր Հայաստանի մասին տպագրվել է 100-ից ավելի հոդված միջազգային մամուլում և ցուցադրվել թվով 15 տեսանյութ, արդյունքները շարունակական են:

Մեկնարկել է էլեկտրոնային մարքեթինգի ռազմավարության իրագործումը: Մեկնարկել է Armenia.Travel զբոսաշրջային պաշտոնական կայքը, որը Google որոնողական համակարգում գովազդային արշավի և օպտիմիզացման արդյունքում ապահովել է կայքի այցելուների կտրուկ աճ, Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվում է Facebook, Instagram, VK, Telegram, Twitter, Google Plus սոցիալական ցանցերում հարթակներում, 3 ամսվա ընթացքում Հայաստանի զբոսաշրջային արդյունքի մասին թվային պլատֆորմենրում եղել է 60 մլն-ից ավելի դիտում (impression):

Նկարահանվել են Հայաստանի մասին գովազդային տեսահոլովակներ, որոնք հրապարակման առաջին 24 ժամվա ընթացքում ապահովել է մոտ 300 հազար գրառման հասանելիություն, մոտ 100 հազար դիտում և մոտ 10 հազար արձագանք (reactions, comments & shares), վերջիններս թարգմանվել և տարածվել են թիրախային շուկաներում:

Ապահովվել է մասնակցությունը ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության մի շարք քննարկումներին ու նստաշրջաններին, Մետաքսի ճանապարհի շրջանակներում ՄԱԿ ԶՀԿ աշխատանքային խմբի հանդիպմանը, Սանկտ Պետերբուրգում կայացած ԱՊՀ զբոսաշրջության խորհրդի հերթական նիստին, ԱՄԷ-ում կայացած VFS GLobal ընկերության կողմից կազմակերպված iConnect ամենամյա կոնֆերանսին:

UNWTO և BSEC հետ համատեղ Մետաքսի ճանապարհի շրջանակներում մշակվել և ներկայացվել է «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի ռազմավարությունը և մարքեթինգային քաղաքականությունը:

Սահմանային անցման գործընթացը դյուրացվել է Չինաստանի, ԱՄԷ, Քաթարի, Ճապոնիայի, Հնդկաստանի և ՌԴ քաղաքացիների համար:

Մշակվել են ՀՀ կառավարության և Մեքսիկական Միացյալ նահանգների կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին Փոխըմբռնման Հուշագրի նախագիծը և ՀՀ և ՉԺՀ միջև համատեղ գործողությունների ծրագրի նախագիծը:

Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 18,7 %-ով: